

ուաջ կը բերէ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ մասին այն գրուածն, որ բողոքովին նոյն է «Պարոնտէրի», անուամբ ծանօթացած Յիշատակարանին հետ, միայն քանի մը տեղ «Բանասիրի», բնագիրը լեզուական փոփոխութիւններ կրած է. իսկ Վիեննայի օրինակը նոյնպէս լեզուական փոփոխութիւններ ունի, աւելի «Բանասիրի», բնագրին մօտենալով: Եւ իրօք Գր. Դարանաղցւոյ ժամանակագրութեան ցուցակին մէջ, զոր ձեռքս ունիմ, Գլ. ԻԳ վերնագիր ունի՝ «Վասն շինութեան Հրեշտակապետ եկեղեցւոյն ի Պալատ, որ այրեալ էր ի հրկիզութենէ»: Նշանեան Վ. անդրագարձած չէ նոյն գրութեան «Պարոնտէրի» համարուած ըլլալուն:

Յայտնի է ուրեմն, որ արդէն ժէ դարուն՝ Դարանաղցւոյ ժամանակագրութեան այս Գլուխն առաջին անգամ ընդօրինակողը, թերեւս ինքնին Գր. Վ. Դարանաղցի, համեստ վերնագիր դրած է՝ «Գրիգոր Վ. ոմն, որ զամենայն անցս իւր եւ զտեսեալսն գիրք մի է շարագրեալ», — ասով ինքզինքն անշուշտ կը մատնանչէ — եւ Պալատու եկեղեցւոյ գանձարան դրած է. անկէ ընդօրինակողներ, անծանօթ Դարանաղցւոյ գրութեան կամ նոյն իսկ գոյութեան, «ոմն» լուսաւորել ուզած են, այն միջոցին ամենածանօթ «Պարոնտէր Պատրիարքն», աւելցրնելով: Ասով կը վերագարձընենք Դարանաղցւոյն՝ իր իսկ հեղինակութիւնը եւ արգիւնաւոր բարեգործութիւնը, դար մ'անկէ զրկուելէն ետեւ: Դառնանք Յովհ. Խուլին: